CASEKEY ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՐՑԱԽՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

CaseKey մրցույթը 16-24 տարեկան ուսանողների համար նախատեսված՝ բիզնես քեյսերի լուծման 6-ամսյա զարգացման ծրագիր և ձեռնարկատիրական մրցույթ է՝ ուղղված մասնակիցների վերլուծական և ինովացիոն մտածողության զարգացմանը:

Ծրագիրը կազմակերպվում է Nation in Action հարթակի միջոցով, և արդեն երրորդ տարին է, ինչ անցկացվում է Հայաստանի ուսանողների շրջանում: Այդուհանդերձ, ցավոք, մինչ այդ ծրագրում Արցախից մասնակիցների ներգրավվածություն չի ապահովվել:

Այս տարի, «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության ջանքերով հաջողվեց կազմավորել երկու թիմ՝ «Մեր սարերը» և «Մունք» տեխնոդպրոցի թիմը, որոնք 6 ամիսների ընթացքում առցանց ռեժիմով աշխատեցին Հայաստանից քոուչների հետ, ուսանեցին բիզնես-քեյսերի լուծման մեթոդները, հետադարձ կապ ստացան մենթորներից և ծրագրի կազմակերպիչներից:

Հոկտեմբերին Արցախից բռնի տեղահանված ծրագրի մասնակիցները իրենց մասնակցությունը շարունակեցին արդեն Հայաստանում, որտեղ իրենց քոուչների հետ միասին այժմ պատրաստվում են մրցույթի եզրափակչին:

Նոյեմբերի 10-ից 12-ը Դիլիջանում տեղի է ունենալու մրցույթի եզրափակիչ փուլը, որի ժամանակ բոլոր թիմերին տրամադրվելու է իրական բիզնես-քեյս պատվիրատուից, որը թիմերը պետք է լուծեն 72 ժամերի ընթացքում: Լավագույն լուծումն առաջարկող թիմը մրցույթի հաղթող կճանաչվի:

Մրցույթին մասնակցող լավագույն մասնակիցներից կազմված Հայաստանի հավաքական թիմը հնարավորություն կստանա մասնակցելու քեյսերի լուծման միջազգային մրցույթին:

ԲՅՈՒՋԵ

Ծրագիրն իրականացվել է քոուչների ու կազմակերպիչների աջակցության և «Մենք ենք մեր սարերը» գործակալության միջոցներով

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 8 000 ԱՄՆ դոլար

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ՝	**Nation in Action, «Մունք» տեխնոդպրոց**
Աշխարհագրություն	**Արցախ, այնուհետև Հայաստան**
Իրականացման ժամկետ	**Մայիս-նոյեմբեր 2023 թ.**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- **Մասնակիցներ՝ 30 ուսանողներ, որոնցից 15-ը հասել են եզրափակիչ փուլին**:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ստացված գիտելիքների և ունակությունների շնորհիվ արցախցի մասնակիցները դառնում են ծրագրի շրջանավարտներ, ստանում են աշխատաշուկայում մրցակցային առավելություններ և հասանելիություն բիզնես խորհրդատուների և ձեռնարկատիրական մտածողությամբ համախոհների համայնքի շրջանակներում: